ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
«ԱՐՏԱՇԱՏ ՔԱՂԱՔԻ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРАРАТСКАЯ ОБЛАСТЬ
ДЕТСКИЙ САД N3
Г. АРТАШАТ

ք. Արտաշատ Ա.Գոլեցյան 9
Հեռ. 2 55 57

г. Арташат ул А. Голецян 9
Тел. 2 55 57

N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2 ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

,,ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2,, ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում ՀՀ Արարատի մարզ, Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոն>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն կից ներկայացվող պայմանագրի նախագծի N 1 հավելվածում նշված ապրանքները:

Ընթացակարգի ծածկագիրն է՝ ,,ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/5,, :

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ հայտերն Ձեր կազմակերպության գնային առաջարկը անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Արարատի մարզ Արտաշատ համայնքի թիվ 3ՄՀՈԱԿ-ի ք.Արտաշատ Ա. Գոլեցյան 9 հասցեով, մինչև 2014թ. դեկտեմբերի 23-ը, ժամը 14:00-ը: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն ՀՀ Արարատի մարզ , Արտաշատ համայնքի թիվ 3 ՄՀՈԱԿ-ի ք.Արտաշատ Ա. Գոլեցյան 9 հասցեում, 2014թ. դեկտեմբերի 23-ին, ժամը 14:00-ին:
Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը :

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել ,,ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2,,ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www gnumnner.am հասցեով ինտերնետային կայքում ,,Շրջանակային համաձայնագրեր,, բաժնի ,,Հրավերներում կատարված փոփոխություններ,, ենթաբաժնում)

Ընթացակարգի ծածկագիրն է՝ ,,ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/5,,
Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

Հարգանքներով Մանկապարտեզի տնօրեն՝ Ն. Հակոբյան

Հավելված_1
«ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/5» ծածկագրով
Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է,որ ցանկություն ունի
Ընթացակարգիմասնակցիանվանումը (անունը)

Մասնակցելու **Արտաշատ քաղաքի թիվ 3 ՄՀՈԱԿ-ի** կողմից **N«ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/5»** ծածկագրով հայտարարված

ընթացակարգի ----------չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

նիրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

----------ն հայտնում և հավաստում է, որի ռիիմնադրի
Ընթացակարգիմասնակցիանվանումը (անունը)

Կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող

Կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է,

բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգիմասնակցիանվանումը (անունը)

Գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցիէլեկտրոնայինփոստիհասցե

--- ---
Մասնակցիանվանումը (անունը) (ղեկավարիպաշտոնը, ԱնունԱզգանունը) (ստորագրությունը)

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

հավելված_2
«ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/5»ծածկագրով
Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N **«ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/5»** ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ----------ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Ապրանքի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Առաջարկվածգինը /տառերովևթվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			

***3-րդ սյունակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:**
*** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:**

---------- ----------
Մասնակցիանվանումը (անունը) (ղեկավարիպաշտոնը, ԱնունԱզգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

նախագիծ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ-14/5

ք. Արտաշատ **<< >> << >> 2014թ.**

ՀՀ Արարատի մարզ,Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ն , ի դեմս տնօրեն **Նարինե Հակոբյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ **«Գնորդ»,** մի կողմից, և«_____»-ն, ի դեմս տնօրեն ___յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1.Պայմանագրի առարկան և գործողության ժամկետը

1.1.Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված **ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերքի ձեռքբերում**/այսուհետ՝Ապրանք/, իսկԳնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար։

1.2.Ապրանքը մատակարարվում է է **սույնպայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանվածՏեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխանն սահմանված ժամկետներով։**

1.3.Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը։

2. Մատակարարման պայմանները

2.1. Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ **Պայմանագրի N2 հավելվածով՝ գնման ժամանակացույցովսահմանված ծավալներով և ժամկետներում։**

2.2. Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով։

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1Գնորդն իրավունք ունի՝

3.1.1.Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա)պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ)չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ)հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3. Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը։

3.1.4. Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա)ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ)հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ)պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5.Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը։

3.1.6.Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված

գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.
3.1.7.Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.
3.1.7.1.Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա)մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,
3.1.8 Ջնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

3.2Գնորդը պարտավոր է՝
3.2.1.Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։
3.2.2.Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.
3.2.3.Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը։
3.2.4.Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից։
3.2.5.Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները։

3.3. Վաճառողն իրավունք ունի՝
3.3.1. Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում **մատակարարված Ապրանքը.**
3.3.2. Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով։
3.3.3. Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.
3.3.4. Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը։
3.3.4.1. Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները։
3.3.5. Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը։Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին։

3.4 .Վաճառողը պարտավոր է՝
3.4.1. Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում։
3.4.2. Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում։
3.4.3. Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում։
3.4.4. Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք։
3.4.5.Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։
3.4.6.Առանձին փուլում թերի մատակարարում թույլ տալու դեպքում, սույն պայմանագրով նախատեսված կարգով, հաջորդ փուլում (փուլերում) լրացնել թերի մատակարարվածը։
3.4.7. Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը։

3.4.8.Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
3.4.9.Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
3.4.10. Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:
3.4.11.Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը
4.1. Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____(_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:
Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
4.1.2.Պայմանագրով նախատեսված Ապրանքի դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի *լրացուցիչ համաձայնագիր* (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել մինչև 20 տոկոս կանխավճար):
4.2. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը
Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը
6.1.Պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդին Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնածԱպրանքի մասին իր կողմից ստորագրված **հանձնման-ընդունման արձանագրության երկուօրինակ (Հավելված3)** և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:
6.2.Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրամի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝
ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.
բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
6.3.Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը
7.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքիմատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է **տույժ՝ մատակարարմանենթակա, սակայնչմատակարարվածԱպրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

7.3.Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4.Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում **է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:**

7.5. Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ **յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:**

7.6.Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7.Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1.Այնդեպքում, երբ «Գնումներիմասին» ՀՀօրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բացթողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2.Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնածպարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Ապրանքի ընդհանուր քանակի բաժանումը ըստ եռամսյակների կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3.Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4.Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է նա և գործակալության կամ ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները).
2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության կամ ենթակապալի պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին.
3)պայմանագրի կատարման ընթացքում գործակալի կամ ենթակապալառուի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ: Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունքունի մասնակցից պահանջելու և որ գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով: Պատվիրատուիանհամաձայնությանդեպքումվերջինսերկուաշխատանքայինօրվաընթացքումծանուցումէմասնակցինևգործակալիկամենթակապալառուիփոփոխությունչիկատարվում, կամպայմանագիրըլուծվումէ.
4) մասնակիցնէպատասխանատվությունկրումգործակալիկամենթակապալառուիպարտավորություններիհամար:
9,5.Ապրանքիմատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:
9.6.Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:
Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:
9.7.Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝
1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.
2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվենն դրանց փոփոխությունըկգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:
9.8.Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում է նդատական կարգով:
9.9.Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկո ւօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: **Պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները, համարվումենՊայմանագրիանբաժանելիմասը:**
9.10.Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
9.11.Սույն պայմանագրով նախատոսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում **է Արտաշատ համայնքի թիվ 3 ՄՀՈԱԿ-ը:**

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
_____	_____
ստորագրություն¤	ստորագրություն¤
Կ.Տ	Կ.Տ

հավելված 1
“.....” ..... 2014թ. կնքված
,,ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ,,-14/5
ծածկագրովպայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆԲՆՈՒԹԱԳԻՐ
2014թվ Արարատիմարզ Արտաշատ համայնքի թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի գնման

Չ/Հ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավոր	Ապրանքա տեսակի նկարագիրը	Արտադրող, ապրանքնային անվանումը,քաշը,յուղայնություն և այլ ֆիզիկական նկարագրեր	մատակարարման պայմանը (օրեկանշաբաթական, ամսեկան)*
Չափաբաժին N 1					
1.1.	Հաց	կգ	Ցորենի ալյուր	Ցորենի ալյուրից թողարկված ,հատով, փաթեթավորված,կամառանցփաթեթավորման պատրաստրվածբարձրտեսակիալյուրիցՀԱՏ3 199:Անվտանգությունը ըստ 2 III-4-9-012003(ՌԴՍանՊին2.3.2.107801)սանիտարա-համաճարակային կանոնների և նորմերի և ,,սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	Օրական
Չափաբաժին N 2					
2.1.	Մակարոն եղեն,	կգ	Մակարոն ,սովորական	Մակարոնեղենանդրոժխմորից,չափածրարված,ԳOUS87592կամհամարժեքը:ԱնվտանգությունընըստN2III4.9012010հիգիենիկ,նորմատիվներիև<<Սննդամթերքիանվտանգությանմասին>> ՀՀօրենքի9-րդ հոդվածի	Ամսական
2.2.	Ալյուր բարձր տեսակի	կգ	Բարձր տեսակի ալյուր,	ԲարձրտեսակիԳOUS2657485,փաթեթավորումը՝ԳOUS26574-85: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների և<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	Ամսական
2.3.	Բուսական յուղ արևածաղկի (ձեթ)	լիտր	Արևածաղկի ձեթ՝ ռաֆինացված (զտված)	Պատրաստված արևածաղկի սերմերի լուծամզմանևճզմմանեղանակով,բարձրտեսակի,զտված,հոտազերծված,փաթեթավորումը՝22 ալցվածմինչև1կամ3լիտրտարողություններում ,ԳOUS1129-93: Անվտանգությունն ըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվների և<<Սննդամթերքիանվտանգությանմասին>>ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	Ամսական
2.4.	Միս տավարի	կգ	Տեղական , փափուկ	Տավարի կիսամսեղիքնով,պիտակավորված, ընդհանուր քանակի 20%-ից ոչ ավելին 2-րդ կարգի տավարի միս, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 19-ի N 1560-Ն որոշմամբ հաստատված«Մսիևմսամթերքիտեխնիկական կանոնակարգիե և«Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի: ՀՍՏ 342-2011:	Շաբաթական
2.5	Հավկիթ (ձու1-ին կարգի)	հատ	01 կարգի	1-ին կարգի, ձու սեղանի կամ դիետիկ, տեսակավորված ըստ մեկ ձվի զանգվածի, դիետիկ ձվի պահման ժամկետը՝ 7օր, սեղանիձվինը՝25օր,սառնարանայինպայմանն	Շաբաթական

				երում՝120օր,ՀՍ18299:Անվտանգությունն ըստN2-III-4.9-01-2010հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	
2.6	**Խտացրած կաթ**	**տուփ**	**Խտացրած կաթ շաքարով**	Խտացրածկաթշաքարով,խոնավությունը՝26.5 %իցոչավելի,սախարոզը43.5%իցոչպակաս,կաթնայինչորնյութերիզանգվածայինմասը՝28.5% իցոչպակաս,թթվայնությունը՝8օԹիցոչավելի,փաթեթավորումը՝չափածրարված մինչև400գրամմետաղականտարաներում,ԳՕ US290378:ԱնվտանգությունընըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին> ՀՀօրենքի 9-րդ հոդվածի	**Շաբաթական**
2.7	**Տոմատի մածուկ**	**կգ**	**Տոմատի մածուկ**	Բարձրտեսակի,ապակեևմետաղյատարաներով,փաթեթավորումը՝մինչև10դմ³տարողությամբ ապակեևմետաղյա տարաներով, ԳՕUS334389կամհամարժեքը:ԱնվտանգությունընըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվների և<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**Ամսական**
2.8	**Շաքարավազ**	**կգ**	**Ճակնդեղից**	Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծվածնստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը 99.75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված),խոնավության զանգվածային մասը՝0.14%-ից ոչավելի, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0.0003 %-ից ոչ ավելի, ԳՕUS2194կամհամարժեքը:Անվտանգությունն ըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**Ամսական**
2.9	**Աղ կերակրի**	**կգ**	**մանր կերակրի աղ**	Էքստրա տեսակի յոդացված, յոդի զանգվածային մասը՝ 50x10մգ/կգ, ՀՍ 239-2005:Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**Ամսական**
2.10	**Սոդա**	**տուփ**		Չոր	**Ամսական**
2.11	**Դափնատերև**	**տուփ**		Չորացրածդափնատերևներ,չափածրարված պոլիէթիլենային, թղթե կամ ստվարաթղթե տոպրակներում:	**Ամսական**
2.12	**Խմորիչ**	**տուփ**		Չոր, գործարանային փաթեթավորված «Pakmaya»կամհամարժեքը, խոնավությունը՝ 8%-ից ոչ ավելի: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների	**Ամսական**

				և<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	
2.13	**Կարտոֆիլ**	**կգ**	**Միջին չափսի**	Վաղահաս և ուշահաս,1-ին տեսակի, չցրտահարված,առանցվնասվածքների,նեղմասիտրամագիծը4սմիցոչպակաս,տեսականումաքրությունը՝90%իցոչպակաս,ԳՕՍՏ2654585,փաթեթավորումը՝կտորի,ցանցիկամպոլիմերայինպարկերով:Անվտանգությունն ըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**Շաբաթական**
2.14	**Սոխ (գլուխ)**	**կգ**	**Միջին չափսի**	Ընտիր տեսակի, թարմ, կծու, կիսակծու կամ քաղցր, նեղ մասի տրամագիծը 3 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍ 27166-86: Անվտանգությունն ըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**շաբաթական**
2.15	**Կաղամբ (գլուխ)**	**կգ**	**Կաղամբ**	Գլուխկաղամբ,վաղահաս,միջահաս,ուշահաս, ընտիրտեսակների,ԳՕՍՏ2676885:ԱնվտանգությունընըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**շաբաթական**
2.16	**Բազուկ (կարմիր ճակնդեղ)**	**կգ**	**ճակնդեղ**	Ընտիրտեսակի,ԳՕՍՏ2676685:ԱնվտանգությունընըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվների և<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**շաբաթական**
2.17	**Խնձոր**	**կգ**	**Միջին չափի**	Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, ԳՕՍ 21122-75, անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության2006թ.դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենիտեխնիկական կանոնակարգի»և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	**շաբաթական**
2.18	**Դեղձ**	**կգ**	**Միջին չափի**	Թարմ և քաղցր, հյութալի, տարբեր տեսակի, միջին չափսերի, առանց վնասվածքների: ԳՕՍ 21833-76: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Նորոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	**շաբաթական**
2.19	**Ստեպղին (գազար)**	**կգ**	**գազար**	Ընտիրտեսակի,ԳՕՍՏ2676785:ԱնվտանգությունընըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**շաբաթական**
2.20	**Վարունգ**	**կգ**	**վարունգ**	Թարմվիճակում,տեղական արտադրության	**շաբաթական**
2.21	**Լոլիկ**	**կգ**	**լոլիկ**	Թարմ վիճակում,տեղական արտադրության	**շաբաթական**
2.22	**Կանաչ լոբի**	**կգ**	**կանաչ**	Թարմ վիճակում	**շաբաթական**
	Թեյ	**տուփ**		Բայխաթեյսև,տերևներովկամհատիկավորված, տուփերով, ԳՕՍ 1937-90 կամ ԳՕՍ 1938-	**Ամսական**

2.23				90:Անվտանգությունն ըստ N2-III-4.9-012010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	
2.24	**Վաֆլի**	**կգ**		Միջուկով կառանց միջուկի չափածրարված կամ առանց չափածրարման, ԳOUS 14031-68 կամ համարժեքը: Անվտանգությունն ըստN2III4.9012010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքիանվտանգությանմասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**Ամսական**
2.25	**Կակաո (փոշի)**	**տուփ**		Խոնավությունը՝ 6.0%-ից ոչ ավելի, pH-ը՝7.1-ից ոչ ավելի, դիսպերսությունը՝ 90.0%-ից ոչ պակաս,փաթեթավորվածթղթետուփերումմետաղյակամապակեբանկաներում,ինչպեսնաև ոչկշռաբաժանված,ԳOUS10876:ԱնվտանգությունընստN2III4.9012010հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքիանվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	**Ամսական**
2.26	**Կարագ**	**կգ**	սերուցքային	Սերուցքային, 71.5-82.5 % յուղայնությամբ, բարձրորակի, թարմ վիճակում, պրոտեինի պարունակությունը 0.7 գրամ, ածխաջուր 0.7 գրամ, 740 կկալ, ԳOUS 37-91: Անվտանգությունընստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի	**Շաբաթական**
2.27	**Ջեմ**	**կգ**	պահածոյացված	Տարբեր մրգերից և հատապտուղներից, պաստերացված բարձր տեսակի ապակե և մետաղյա տարաներով, ԳOUS 7009-88, ՀUS 48-94: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի	**Ամսական**
2.28	**Լոբի հատիկավոր**	**կգ**	կարմիր	Լոբի գունավոր, միագույն, գունավոր ցայտուն, չոր՝խոնավությունը 15 %-ից ոչ ավելի կամ միջին չորությամբ՝ 15.1-18.0 %, ԳOUS 7758-75: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդհոդվածի	**Շաբաթական**
2.29	**Ոլոռ**	**կգ**	կանաչ	Չորացրած, կեղևած, դեղին կամկանաչգույնի, ԳOUS 16730-71: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի	**Շաբաթական**

2.30	**Ոսպ**	**կգ**	հատիկավոր	Մաքուր, չոր՝խոնավությունը 14 %-ից ոչ ավելի, միջին չորությունը՝ 14.0-17.0 % ոչավելի, ԳOUS 7066-77: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի	**Շաբաթական**
2.31	**Բրինձ**	**կգ**	Սպիտակ հատիկավոր	Սպիտակ, խոշոր, բարձր, երկար տեսակի, չկոտրած, լայնությունից բաժանվում են 1-4 տիպերի, ըստ տիպերի խոնավությունը 13 %-ից մինչև 15 %, ԳOUS 6293-90: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի	**Շաբաթական**
2.32	**Հնդկաձավար**	**կգ**	հատիկավոր	Հնդկաձավար I տեսակի, խոնավությունը՝ 14.0 %-ից ոչավելի, հատիկները՝ 97.5 %-ից ոչպակաս, գործարանայինպարկերով, ԳOUS 5550-74: Անվտանգությունընստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներին<<Սննդամթերքիա նվտանգությանմասին>>ՀՀօրենքի 9-րդհոդվածի	**Շաբաթական**
2.33	**Ցորենաձավա ր**	**կգ**	հատիկավոր	Ստացված ցորենի թեփահան հատիկների հղկմամբ կամ հետագա կոտրատմամբ, ցորենի հատիկները լինում են հղկված ծայրերով կամ հղկված կլոր հատիկների ձևով, խոնավությունը 14 %-ից ոչավելի, աղբային խառնուկները 0.3, պատրաստված բարձր և առաջին տեսակի ցորենից, ԳOUS 276-60: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին <<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-ր դհոդվածի	**Ամսական**
2.34	**Սև պղպեղ**	**տուփ**	աղացած	Համեմունք աղացած, խոնավությունը՝ 12 %-ից ոչ ավելի, եթերային յուղերը՝ 0.8 %-ից ոչ պակաս, մոխրի առկայությունը՝ 5-6 %, ԳOUS 29053-91: Անվտանգությունն ըստ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվներին<<Սննդամթերքի անվտանգության մասին>>ՀՀօրենքի 9-րդ հոդվածի	**Ամսական**
2.35	**Չամիչ**	**կգ**	դեղին	Գործարանային մշակման, պահպանած 50 C մինչև 200 C ջերմաստիճանի պայմաններում, 70 %-ից ոչ ավելի խոնավացում, դեղին գույնի	**Ամսական**

2.36	**Պեչենի**	**կգ**	թխվածքաբլիթ	Կաթնահունց, շաքարահունց, խոնավությունը՝ 3-10%, շաքարիզանգվածայինպարունակությունը՝ 20-27%, յուղայնությունը3-30%, տեղականարտադրության: Անվտանգությունը՝ ըստ 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ ՀՍանդամթերքիանվտանգությանմասին՝ՀՀօրենքի 8-րդհոդվածի	**Ամսական**
2.37	**Կանաչ ոլոռ**	**հատ**	պահածոյացված	Պահածոյացված, կանաչ. տարայավորված 750գ -անոցտարայով: Տեղականկամարտասահմանյանարտադրության: ԳOUS 15842-90: Անվտանգությունընևմակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներին «Սանդամթերքիանվտանգությանմասին« ՀՀօրենքի 8-րդհոդվածի	**Ամսական**
2.38	**Կիսել**	**տուփ**	փոշի	Մրգային, թարմ, ռուսականարտադրությանկամհամարժեք: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվներիև՝Սանդամթերքիանվտանգությանմասին՝ՀՀօրենքի 8-րդհոդվածի:	**Ամսական**
2.39	**Կոնֆետ**	**կգ**		Թարմ, շոկոլադե,տեղականարտադրությանկամհամարժեք: Անվտանգությունը՝ ըստN 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, իսկմակնշումը՝ ՀՍանդամթերքիանվտանգությանմասին՝ՀՀօրենքի 8-րդհոդվածի:	**Ամսական**
2.40	**Հալած յուղ**	**կգ**		Յուղխոհարարական, 100%-անոցկենդանական, առանցխոլեստերենիպարունակության, կշռածրարվածմետաղականկամպլաստմասայետարաներով: Անվտանգությունը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկնորմատիվների, մակնշումը՝ ՀՍանդամթերքիանվտանգությանմասին՝ՀՀօրենքի 8-րդհոդվածի:	**Շաբաթական**
2.41	**Մանդարին**	**կգ**		Մանդարինթարմ, Ipտղաբանականխմբի, դեղինկեղևովևպտղամսով, ԳOUS 4428-82, անվտանգությունը, փաթեթավո-րումըևմակնշումը՝ ըստՀՀկառ. 2006թ. դեկ-տեմբերի 21-իN 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխ. կանոնակարգի»և«Սանդամթերքիանվտանգությանմասին»ՀՀօրենքի 8-րդհոդվածի	**Ամսական**
2.42	**Բանան**	**կգ**		Բանանթարմ, պտղաբանականIIխմբի (71-իցփոքրմինչև 63 մմներառյալ), ԳOUS 4427-82:Անվտանգությունընևմակնշումը՝ ըստՀՀկառավարության 2006թ. դեկտեմբերի 21-իN 1913-Նորոշմամբհաստատված «Թարմպտուղ-բանջարեղենիտեխնիկականկանոնակարգի» և «Սանդամթերքիանվտանգությանմասին»	**Ամսական**

				ՀՀօրենքի 8-րդհոդվածի	
2.43	Հավի միս	կգ		Հավի մսեղիք սառեցրած, առանց փորոտիքի, մաքուր, արյունազրկված, առանց կողմնակի հոտերի, ԳOUS 25391-82: Անվտանգությունն ըստ N2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	Շաբաթական
2.44	Հավի կրծքամիս	կգ		Հավի կրծքավանդակ, պաղեցրած և սառեցված, մաքուր, արյունազրկված,առանց կողմնակի հոտերի, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթներով, սառեցվածը՝առանց կշռածրարման: Անվտանգությունը և մակնշումը՝N2III4.9012003 (ՌԴՍանՊին2.3.2107801) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի,, ԳOUS25391-82	Ամսական
2.45	Ղղպեղ	կգ		Ընտիր կամ սովորական տեսակի: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006թ. դեկտեմբերի 21-ի N 1913-Ն որոշմամբ հաստատված «Թարմ պտուղ-բանջարեղենի տեխնիկական կանոնակարգի» և «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Ամսական
2.46	Վարունգի մարինադ	հատ		Պահածոյացված, կանաչ. տարայավորված 750 -1000գ-անոց տարայով: Տեղական կամ արտասահմանյան արտադրության: ԳOUS 15842-90: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և «Սննդամթերքի անվտանգության մասին« ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի	Ամսական
2.47	Կանաչի	կապ		Թարմ վիճակում, տարբեր տեսակների	Ամսական
2.48	Սնրուկ	կգ		Թարմ վիճակում.ԳOUS13907-86: Անվտանգությունը՝ըստ 2-111-4. 9-01-2010 հիգիենիկ նորմատիվների և,,Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի	Ամսական
2.49	Սպիտակաձավար	կգ		Պատրաստված կոշտ և փափուկ ցորենից, ԳOUS 7022-97: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4.9-01-2010 հիգիենիկ նորմատիվների, ՀՀ կառավարության 2007թ. հունվարի 11-ի N 22-Ն որոշմամբ հաստատված, «Հացահատիկին, դրա արտադրմանը, պահմանը, վերամշակմանը և	Ամսական

				օգտահանմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգիե և «Սենդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի:	

ԳՆՈՐԴ

_____
(ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

_____
(ստորագրություն)

Հավելված N2
Պայմանագիր ,,ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ ՇՀԱՊՁԲ -14/5.

------,, դեկտեմբեր 2014թվ

2014 թվ.Արտաշատ համայնքի թիվ 3 ՄՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2015 թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1.1	Հաց	կգ		1050		1050		1050		1050		4200	
2.1	Կարագ 1 (յուղայնությունը՝ 71.5-82.5 %)կգ			90		90		90		90		360	
2.2.	Մակարոն, վերմիշել			135		135		135		135		540	
2.3.	Ալյուր բարձր տեսակի			50		50		50		50		200	
2.4	Բուսական յուղ արևածաղկի (ձեթ)			30		30		30		30		120	
2.5	Միս տավարի			75		75		75		75		300	
2.6	Հավկիթ(ձու1-ին կարգի)			750		750		750		750		3000	
2.7	Խտացրած կաթ			60		60		65		65		250	
2.8	Տոմատի մածուկ			15		15		15		10		55	
2.9	Շաքարավազ			100		100		100		100		400	

2.10	Աղ կերակրի			25		25		25		25		100	
2.11	Սոդա			2		2		2		2		8	
2.12	Դափնատերև			10		5		10		5		30	
2.13.	Խմորիչ			3		2		3		2		10	
2.14	Կարտոֆիլ			500		500		500		500		2000	
2.15	Սոխ (գլուխ)			10		10		10		10		40	
2.16	Կաղամբ (գլուխ)			250		250		250		250		1000	
2.17	Բազուկ (կարմիր ճակնդեղ)			15		15		15		15		60	
2.18	Խնձոր			25		25		25		25		100	
2.19	Դեղձ			-		25		25		-		50	
2.20	Ստեպղին (գազար)			25		25		25		25		100	
2.21	Վարունգ			-		50		50		-		100	
2.22	Լոլիկ			-		75		75		-		150	
2.23	Կանաչլոբի			-		15		15		-		30	
2.24	Թեյ			5		10		5		5		25	
2.25	Վաֆլի			15		15		15		158		60	

2.26	Կակաո (փոշի)			3		3		3		3		12	
2.27	Չամիչ			2		3		2		3		10	
2.28	Պեչենի			20		20		20		20		80	
2.29	Կոնֆետ			15		15		15		15		60	
2.30	Կանաչ ոլոռ			15		15		15		15		60	
2.31	Սև պղպեղ			2		3		2		3		10	
2.32	Հալած յուղ			35		40		35		40		150	
2.33	Բրինձ			100		100		100		100		400	
2.34	Գրեչկա			50		50		50		50		200	
2.35	Ոլոռ			15		15		15		15		60	
2.36	Ոսպ			25		25		25		25		100	
2.37	Կարմիր լոբի			5		-		-		5		10	
2.38	Կիսել			20		20		20		20		80	
2.39	Հավի միս			250		250		250		250		1000	
2.40	Հավի կրծքամիս			15		15		15		15		60	
2.41	Բանան			25		25		25		25		30	

2.42	Ջեմ			25		25		25		25		100	
2.43	Ցորենաձավար			20		20		20		20		80	
2.44	Մանդարին			15		-		-		15		30	
2.45	Վարունգի մարինադ			5		5		5		5		20	
2.46	Կանաչի			20		20		20		20		80	
2.47	Պղպեղ			-		25		25		-		50	
2.48	Սմբուկ			-		25		25		-		50	
2.49	Սպիտակաձավար			-		2		3		-		5	
Ընդամենը				X		X		X		X		X	

ԳՆՈՐԴ

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

/ստորագրություն/
Կ.Տ

հավելված թիվ 3
“.....” ..... 2015թ. կնքված
,,ԱՄԱՀ-ՄՀՈԱԿ-ՇՀԱՊՁԲ,,-14/5
Ծածկագրով պայմանագրի

Կատարող	**Պատվիրատու**
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	**գտնվելու վայրը** _____
հհ _____	**հհ**_____
_____	_____
հվհհ _____	**հվհհ**_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<_____>> <<_____>> 2015թ.

Պայմանագրի անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<____>> 2015 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողը՝ ի դեմս_____,
հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ _____ 2015թ-ից __ ___ 2015թ.ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	**Գնման առարկայի քանակական ցուցանիշը**	**Աշխատանքների կատարման ժամկետը**	**Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)**	**Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)**
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	**Աշխատանքը ընդունեց**
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
Ազգանուն, Անուն	Ազգանուն, Անուն
Կ.Տ.	**Կ.Տ.**